

Ուրբաթ, 18 փետրվարի 2011թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 32 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են`

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2011», «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Հաղորթի շրջանի Տոդ գյուղի ջրամատակարարման համակարգի նախագծում», «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ջրամատակարարման համակարգի վերակառուցման հեղինակային հսկողություն», «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների կահավորում (2-րդ փուլ)», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցի մասնակի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի համակարգչային դասարանի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 30 մանկապարտեզի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսազյուղ գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի բժշկական կենտրոնի կաթսայատան կառուցման նախագծում», «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Եզնիկ Մոզիյանի անվան մասնագիտական ուսումնական դպրոցի և Բեկոր Աշոտի Փաշայանի, Իշխանյանի փողոցներին հարող տարածքի ինժեներա-երկրաբանական հետազոտություն ու զեռոգիական հանույթի աշխատանքներ» ծրագրերը.

«Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական միության երևանյան կենտրոնատեղիի կառուցում» ծրագիրը,

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011-2012 թվականներին իրականացվող ծրագիրը, որի նպատակն է նպաստել Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների կայացմանն ու ուժեղացմանը, խրախուսել հանդուրժողականության տարածմանը` քաղաքացիական հասարակության զարգացման միջոցով, տրածել բաց հասարակության արժեքները և

աջակցել արդյունավետ կառավարմանը նպաստող քաղաքականության մշակմանն ու կիրառմանը հանրային կյանքի տարբեր ոլորտներում,

«Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ծրագիրը,

«Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականի ընթացքում իրականացվող «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» և «Երեխաների անվճար բժշկական օգնություն» ծրագրերը,

«Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմիկ անկյուն» ամենամյա խմբային տան ծրագիրը,

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Գյումրու Օյունջյանի թիվ 21 միջնակարգ դպրոց-վարժարանի համար կահույքի պատրաստում» ծրագիրը,

«Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» և «Վաղ մանկության զարգացում» ծրագրերը,

«Օրբան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականի ընթացքում իրականացվող ծրագրի մասին, որի նպատակն է օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծերերին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին, միայնակ ու կարիքավոր ծերերին և «Օրբան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրերը,

«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շիրակ» բժշկական ծառայություններ», «Գյումրի-ԱՌԴԱ», «Անի-Պարտեզ», «Գյումրի-10», «Գյումրի-23», «Նոր Նորք-99», «Նոր Նորք-101», «Նոր Նորք-104», «Զեյթուն-156» ծրագրերը,

«Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ծպեղնային հարկի կառուցում ծրագիրը:

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագիրը:

Նխատում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: